Վարդիկեան, Մ.

Տաւիղ

784
Վ-30

784.67
4-30

ՀՐԱՏ. Ի.Գ. Մ.ՄԵԼԻՔԲԵԱՆ ՔՈՅՐԵՐԻ.

# ԾԱՂԻԿ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ.

ԴԱՇՆԱԿՑ. ՊԻԱՆՈՅԻ.

Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆ



Գինն է 50 կոպ.

11333

2013
Հ.Ս.Խ.Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2009

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տասնևիններորդ դարի վերջերում Գերմանիայում, Շվէյցարիայում և լուսաւորեալ այլ երկիրներում՝ շնորհիւ Պեստալոցցու և ուրիշ նշանաւոր մանկավարժների՝ նոր սկզբունքներ է մշակւում ընդհանուր և բազմակողմանի կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ: Պեստալոցցին կրթական մեծ նշանակութիւն էր տալիս՝ միւս գիտելիքների շարքում՝ գեղարւեստին ընդհանրապէս և երգեցողութեան մասնաւորապէս:

Հայերս որպէս մի կուլտուրական ազգ, անկասկած անմասն չէինք կարող մնալ այդ քաղաքակրթական գործում, նամանաւանդ, որ մեր մանկավարժներից մեծ մասը Պեստալոցցու գաղափարներով սնւած նոյն սկզբունքներն աշխատեցին մտցնել նաև կրթական գործում:

Սակայն կրթական գործը հայերիս մէջ զանազան արգելքների հանդիպելով, անտարակոյս չէր կարող այնքան էլ մխիթարական լինել, ուր մնաց որ երգեցողութիւնն ու երաժշտութիւնը զարգանար այնպէս, ինչպէս նորագոյն մանկավարժութիւնն է պահանջում: Գեղարւեստը չի սիրում կաշկանդումներ:

Ինչպէս յայտնի է, շատ երկար ժամանակ մեր ուսումնարաններում երեխաներին սովորեցնում էին նրա հոգուն ու հասկացողութեան անմատչելի գրաբար երգեր ու անմարսելի եղանակներ, կամ թէ ժողովրդական երգեր, որոնք նոյնպէս դժւար հասկանալի էին երեխաների համար: Չունէինք յատուկ այդ առարկայի համար ուսուցիչներ. միայն վերջին ժամանակներս մի տեսակ սէր զարթնեց մեր հայ երիտասարդութեան մէջ՝ դէպի այդ առարկան և տեղիս ռուսաց երաժշտական ուսումնարանը մեզ տւեց երաժշտապէս փոքր 'ի շատէ զարգացած ուսուցիչներ:

Սակայն այս առարկայի դասատւութիւնը նոր գործ լինելով մեր մէջ, զգալի կերպով նկատելի է ձայնագրեալ կանոնաւոր երգարանների բացակայութիւնը:

Հրատարակելով այս աշխատութիւնը՝ յուսով եմ, որ մասամբ կարող եմ լրացնել այդ կարիքը:

ՄԱԿԱՐ ՎԱՐԴԻԿԵԱՆ.

1912 Թ. 11-Ն փետրւարի
Տփխիս.

11333 38
2003
(6819)

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ
653-2017
(922-2009)



## 1. ԾԱԾԱՓ

Յորդոր




Ծածափ կանի պար կգայ.
Բալխս պէս պարող չը կայ.
Պա՜ր, պա՜ր, պա՜ր
Ես քու էս ղոչաղ
Տուտերին մատաղ։

Ծածափ կանի ծիծաղով,
Երգ ասելով ու խաղով.
Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն,
Ես քու կըլպըլտան
Սուր լեզուին ղուրբան։

Ծածափ կանի՝ ծափ-ծըփոց
Սա չըգիտի լաց ու կոծ.
Պա՜հ, պա՜հ, պա՜հ,
Ես սրա ուրախ
Արևին մատաղ։

Յակ. Աղաբաբ.

## 2. ՇՆԻԿ.

Ցորդոր




Մաքուր կեցիր, որ քեզ գրկեմ,
Անեմ ծոցս, համբուրեմ,
Որ մայրիկը քեզ դուրս չանի,
Իմ սենեակում միշտ թողնի։

Իսկ դու այսօր ցեխոտ ոտքով
Ներս չմտնես իմ շնիկ,
Գրնա լաւ ոտիկներդ,
Արի խաղանք անուշիկ։

Բայց շնիկը ինձ չըլսեց,
Ցեխոտ ոտքով ներս վազեց.
Տեսաւ մայրիկն ու նեղացաւ
Իմ շնիկին դուրս արաւ։



## 3. ԻՄ ՊՈՒՃՈՒՐ ՇՈՒՆ

Ցորդոր



## 4. ՄԱՐՏԻ ՓՈԽԸ

Ցորդոր




Էս որ լսեց, կհամբերէր
Մարտ ամիսը էն գիժ-մօղի,
Բայց խրա էլ վերջն էր եկել
„Նկ, ապրիլից փոխ ուզի“:

Ու դաշտ վազեց, քամի փչեց
Բուք ու բորան, սառը ձիւն,
Ձիւն ու քամի իրար խառնեց –
Խեղդեց պառաւի ուլերին...

Խեղճ պառաւը կը մրմնջայ,
Ելել կուգայ քոր ու փոշման,
„Մարտէն պրծայ, դարդէն պըրծայ“
Էլ ե՞րբ կասի էտպէս բան:

Յով. Կոստանեան.

## 5. ՀՈՎԻԿ.



Ցորդոր




Դէս ղէն թռաւ, շուրջը նայեց,
Ցանկարծ կանգնեց, քարացաւ,
Իւր թեւերը մէկ էլ ուղղեց,
Դէպի դաշտը սլացաւ:

Թռաւ գնաց գուլթնաւորի
Վառած կուրծքը զովացրեց,
Թոյլ բազուկը հեզ բանւորի
Նոր ուժերով ամրացրեց:

Հոռովելի անուշ ձայնը
Դաշտ ու հովիտ լցւեցաւ,
Ու հովիկը «հó եզ ջան»-ը
Ինքն էլ կրկնեց ու անցաւ:

Ս. Սարիբէկեան:

## 6. ՀՐԱՒԷՐ.




Արի մեզ մօտ, Աստծոյ ղրկած
Դու մեր հիւրն ես թանկագին.
Արի զէզի շւաքի տակ,
Դու տեղ ունես մեր գլխին։

Հէնց նոր մերոնք հացի նստան
Գերանդիքն էլ ըթացան.
Արի մեզ մօտ, քու էլ, ախպէր,
Կուրծքդ շոյեն պաղ հովեր։

Է՜հէյ, արի, ծամբորդ ախպէր,
Էս շոգ վախտին ուր կերթաս.
Սոված կլինես, բեղրած կլինես.
Ըշտապ-ըշտապ ուր կերթաս։

Գ. Սարիէնեան



## 7. ՎԵՐ ԿԱՑ.






Վեր կաց, նայիր պատուհանից,
Դէպի հեռու մեր դաշտեր,
Տես թէ ինչպէս մեղմ զեփիւռից
Սլսլում են լի հասկեր։

Վեր կաց, զաւնուկ, սիրուն հրեշտակ
Աղօթք ասա մի բերան.
Առ գրքերով լի պայուսակ,
Գընա զըցարդ վարժարան։

Դէ շուտ վերկաց էլ մի քընիր
Ծոյլ ու անհոգ անկողնում.
Առ գրքերդ, առաջ դիմիր,
Որ բաղդ գտնես դու կեանքում։

## 8. ԾԻԾԵՌՆԱԿԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ.









Մէկ անգամ էր նա բոյն շինել,
Եւ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին
Բոյնն աւերակ էր գըտել։

Այժմ նորից բոյն էր շինում
Եւ շինում էր և երգում,
Ամեն մի շիւղ կըպցնելիս՝
Առաջւայ բոյնն էր յիշում։

Նա յիշում էր անցած տարին
Իր անուցած ձագերին,
Որոնց ձամբին յափշտակեց
Արիւնարբու թըշնամին։

Բայց նա կրկին բոյն է շինում,
Եւ շինում է և երգում,
Ամեն մի շիւղ կըպցնելիս՝
Առաջւան բոյնն էր յիշում։

Ղ. Աղայեան.

## 9. ԳԻՇԵՐ.

Ծանր









Գետափին թէ ուր
Վուլվուլում է բուն,
Գետակն էլ տխուր
Հրաժեշտ է երգում:
Իսկ լայնատարած
Երկնքի վրով
Լուսինն է կամաց
Անցնում սողալով:

Աստղերն էլ սիրուն
Ժըպըտով փայլում,
Իրանց Թագուհուն
Ճամբայ են ղնում...
Գեղեցիկ ու զով
Գիշեր է պայծառ.
Անուշիկ քընով
Քընած է աշխարհ.

Ուր քնած երկրին
Գետակն ու բուն
Երգով միասին
Օրօր են ասում:

Հ. Հայրապետեան

### 10. ՋՈՒ ՋՈՒ ՋՈՒ ՋՈՒ.

Պառ.









Մանուկներ







Աքաղաղ.







Հաւ.












Ծանր

## 11. ՀՐԱԺԵՇՏ












## 12. ՆԱՆԻ ՆԻՒՐՆԵՐԸ









«Զալտիկ ճուտն էլ, Էյ Գայանէ,
Լաւ պահպանիր, էն քո փայն է,
Սևուկ-մեռւկ աքլորիկն էլ
Թող Իոկուհուն լինի նւէր:

«Իսկ ինձ միայ Թխսամէրը
Ու էն մարիկ ճուտիկները
Որ մեծանան և ձու ածեն.
Նորից մէկ-մէկ Թուխս նստեն:

Աղաբար.

## 13. ՋԱՆ, ԱՅ ԼՈՒՍԻՆ






Խաւարն իսկոյն չքացաւ,
Ու էլ գետնին չըկացաւ,
Լուսնի լուսից հալածւած՝
Խոր ձորերի մէջ մնաց —
Ջա՜ն, այ լուսին...

Բայց ամբերը մոլեգին
Նախանձեցին լուսնիկին,
Ելան երկինք կապուտակ՝
Լուսին առան իրենց տակ.
—Ջան, այ լուսին և այլն...

Ց. Աղաբար.

11333
38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## 14. ԱՂՔԱՏԱՂՋԻԿ.

Ցորդոր.




Ո՞վ քեզ խփեց շուտ իմացիր՝
Նա հեռու չէ ապա բռնիր։
Աչքկապածը. Այս Գոհարն է այն սիրունիկ
Որ ձեռք զրեց իմ Թևին։
Խումբ Հա, հա, հա, հա. դու չիմացար
Ապա տեսնենք մի ուրիշին։

—Ո՞վ քեզ խփեց ապա ընկեր
Ժամանակ է շուտ իմացիր։
Աչքկապածը. Այս Սօսին է, զիժ, կուարար,
Որ բռունցքով խփեց ու Թռաւ
Խումբ. Այո, այո, դու իմացար,
Ապա Սօսի, զէն, դու նստիր։



## 15. ԴՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Ցորդոր




Քաշիր, եզը, ուսիդ մատաղ
Քաշիր, քաշենք, վար անենք,
Ծիպտին արա, քշիր, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Պարտքատէրը զանգատ գնաց,
Բեօխուէն կը գայ, կծեծի.
Տէրտէրն օրհնեց անվարձ մնաց,
Կրարկանայ, կանիծի։

Էն օրն եկան Թօվջի արին,
Հարկ են ուզում տէրութեան
Ինչ տամ կռւին ու բէգարին..
Վարի, վարի, իմ գութան։

Յովհ. Թումանեանց

## 16. ԹԷ ԻՄԱՆԱՔ ԵՍ ՈՎ ԵՄ

Ցորդոր




Վարդ.—Հէնց որ կգայ անուշ գարուն,
Կրծքին բազմած ես կը գամ.
Իմ ատլասիկ թերթիկներուն
Կապոյտ կապոյտ զոյն կը տամ.
Թէ իմանաք—ես ծվ եմ...

Ման. Անգակ, զանգակ քնքուշ ծաղիկ.
Սպիտակի հետ կապուտիկ
Դու յասմիկն ես շող ու շաղիկ,
Թերթիկներդ կապուտիկ:

Շուշան. Կանաչների զմրուխտ ծոցում
Ես ծաղկում եմ սեպ-սիպտակ
Անմեղութեանս է նախանձում
Վերից Աստուծու հրեշտակ,
Թէ իմանաք ես ծվ եմ:

Մանուկ. Կանաչների զմրուխտ ծոցում
Դու ես ծաղկում մեր շուշան,
Տեսքդ անուշ, բոյրդ անուշ,
Անմեղութեան դու նշան:

Ցորդոր

## 17. ԾԻԾԵՌՆԱԿԻՆ








Ինչ կայ, էրնակ,
Այ ծիծեռնակ,
Էդ քնքուշիկ քու բըկում,
Որ դու էդպէս
Հազար տեսակ
Գեղգեղում ես ու երգում:

Ց. Աղաբաբ.



## 18. ԳԱՐՈՒՆ

Ցորդոր




Կուժնկն եկաւ երամ կապած
Կըռկըռալէն անուշ անուշ,
Կաքաւ քարին գիր է կարդում,
Կըղկըղալէն անուշ, անուշ:

Հարսն ու աղջիկ հանդերն ելան
Շորորալէն անուշ, անուշ,
Ծաղկանց բուրմունքն անմահական
Սըլսըլալէն անուշ, անուշ:

Յով. Թումանեան:

ՀԱԽՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## 19. ԳԱՐՈՒՆ

Ոչ այնքան ծանր․




Դաժան ձերը կորաւ, գնաց,
Ինչ սիրուն է, ինչ ուրախ․
Ծառը փթթած, վարդը բացւած,
Թռչունների երգ ու տաղ:

Ջա՛ն, ջան գարուն, քաղցրիկ անուն
Հազար բարով դուն եկար
Բերա՛ր խաղեր, ուրախութիւն,
Կանաչ դաշտեր մեզ համար։

Հ. Հայրապետեան:

ՎԵՐՋ

Электро-печатная Ар. Кереселидзе. грибоѣдовская ул. № 34.

653
тепсрии